CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
GOVERNOR

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПРЕДСЕДАТЕЛЬ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

0010, Ереван, Вазгена Саркисяна, 6
Тел.: (37410) 592 592(0624, 0625)
Email: secretariat@cba.am

28.04.2023 N 08.1-04/369-23
21.04.2023 Ձեր N 02/16.4/13785-2023

Հայաստանի Հանրապետության վարչապետի
աշխատակազմի ղեկավար պարոն Արայիկ Հարությունյանին

Հարգելի պարոն Հարությունյան

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածներով՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ 59Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության» վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը:

Առդիր՝ 7 թերթ:

Հարգանքով՝

Մարտին Գալստյան

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԿՈԴ
050.0059 Ա. 28.04.23

28 ապրիլի 2023 թվականի թիվ 59 Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «թ» կետերով և 31-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության» վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի եզրակացությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Մ. Գալստյան**
Երևան

ՀՀ կենտրոնական բանկի եզրակացությունը
Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի
կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ[1]

Մակրոտնտեսական միջավայր[2]**.** Աշխարհաքաղաքական մարտահրավերներով և էական տնտեսական անորոշություններով ուղեկցվող 2022 թվականին համաշխարհային տնտեսությունում, այդ թվում՝ նաև ՀՀ գործընկեր երկրներում, արձանագրվել է տնտեսական աճի դանդաղում: Այդուհանդերձ, գործընկեր երկրներում էական տնտեսական խնդիրներին զուգահեռ, Հայաստանի տնտեսությունը 2022 թվականին արձանագրել է զգալի դրական զարգացումներ: Վերջինս մեծամասամբ պայմանավորվել է ռուս-ուկրաինական հակամարտության և ՌԴ նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով ապրիլ ամսից դեպի Հայաստան միջազգային այցելուների, աշխատուժի, ընկերությունների և ֆինանսական կապիտալի էական ներհոսքով: Նշվածի արդյունքում, 2022 թվականին Հայաստանում տնտեսական աճը գրեթե կրկնակի գերազանցել է բյուջեի նախագծով թիրախավորված ցուցանիշը՝ կազմելով 12.6%:

Առաջարկի մասով ՀՀ տնտեսական բարձր աճը պայմանավորվել է մեծամասամբ ծառայությունների ճյուղի նպաստմամբ, որտեղ էական ազդեցություն են ունեցել մի կողմից՝ աշխատուժի ու կապիտալի ներհոսքի արդյունքում տեղեկատվական տեխնոլոգիաների, կապի ոլորտում արձանագրված էական աճը, մյուս կողմից՝ ֆինանսական և զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ արտաքին պահանջարկի ընդլայնումը: Արդյունաբերության, առևտրի և շինարարության ճյուղերում ևս արձանագրվել են աճեր, մինչդեռ գյուղատնտեսության ոլորտը նվազել է 0.1 տոկոսով:

Չնայած աշխատուժի և կապիտալի զգալի ներհոսքը դրական նպաստում է ունեցել ՀՀ-ում տնտեսական ներուժի ավելացմանը, 2022 թվականին տնտեսության հիմնական շարժիչ ուժը եղել է ՀՀ ապրանքների և հատկապես ծառայությունների նպատմամբ էական արտաքին պահանջարկը: Դրան զուգահեռ որոշակիորեն

---

[1] ՀՀ կենտրոնական բանկը պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության վերաբերյալ եզրակացության կազմման շրջանակներում առաջնորդվում է բյուջեի կատարողականի՝ միջնաժամկետ պարտքի կայունության ապահովման, հարկաբյուջետային քաղաքականության պարբերաշրջանային ուղղվածության ու դիրքի, երկարաժամկետ աճին նպաստելու և այլ սկզբունքների ներքո գնահատականների ներկայացմամբ:

[2] Սույն փաստաթղթում բերված թվային տվյալները և գնահատականները վերցված են ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի կատարման մասին հաշվետվությունից՝ բյուջեի ճշգրտված ծրագրի նկատմամբ:

ավելացել է նաև ներքին պահանջարկը: Արդյունքում, 2022 թվականին արձանագրվել է մասնավոր սպառման բարձր աճ, իսկ արտաքին պահանջարկի ընդլայնումը նպաստել է զուտ արտահանման դիրքի էական բարելավմանը:

Այսպես, տնտեսական բարձր աճն ուղեկցվել է և՛ արտահանման և՛ ներմուծման ծավալների երկնիշ բարձր աճերի արձանագրմամբ: Ընդ որում, ողջ տարվա ընթացքում արտահանման աճը որոշակի գերազանցել է ներմուծման աճին, որի արդյունքում զուտ արտահանումը դրական նպաստում է ունեցել տնտեսական աճին:

Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների բարձր աճը պայմանավորվել է ՏՏ ոլորտի, զբոսաշրջիկներին մատուցված ծառայությունների աճով, ինչպես նաև ՌԴ ներմուծման շուկաների սահմանափակման արդյունքում՝ դեպի ՌԴ արտահանման ծավալների զգալի ավելացմամբ: Իսկ ներմուծման ծավալների բարձր աճը պայմանավորված էր տնտեսական ակտիվության, տնօրինվող եկամտի և ներքին պահանջարկի ընդլայնմամբ:

Վերոնշյալ զարգացումների պարագայում, 2022 թվականի ընթացիկ հաշվի պակասուրդը էապես նվազել է՝ կազմելով ՀՆԱ-ի 0.9 տոկոսը:

Գնաճի զարգացումներ և դրամավարկային քաղաքականություն.

2022 թվականին, ինչպես ՀՀ մակրոտնտեսական միջավայրը, այնպես էլ գնաճային զարգացումները մեծապես կրել են փետրվարի վերջից սրված ռուս-ուկրաինական հակամարտության, Ռուսաստանի տնտեսության նկատմամբ կիրառված տարբեր պատժամիջոցների և դրանցից ածանցված տնտեսական ազդեցությունները: Հատկանշական է, որ մինչև 2022 թվականի փետրվարը ՀՀ-ում արձանագրվում էր գնաճի զգալի դանդաղում՝ նախորդ շրջանում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում: Հակամարտության և պատժամիջոցների պայմաններում արժեշղթաների խաթարումների հետևանքով էներգակիրների և պարենային ապրանքների միջազգային շուկաներում արձանագրված գների աճը, ինչպես նաև միջազգային այցելուների կողմից Հայաստանում պահանջարկի միջավայրի էական ընդլայնումը պայմանավորել են տարվա հետագա հատվածում ներքին տնտեսությունում բարձր գնաճի ձևավորումը: Ստեղծված իրավիճակում գների կայունության ապահովման նպատակով 2022 թվականին ՀՀ կենտրոնական բանկը վարել է դրամավարկային պայմանների խստացման քաղաքականություն՝ բարձրացնելով քաղաքականության տոկոսադրույքը ընդհանուր 3.0 տոկոսային կետով: Իրականացրած զսպող դրամավարկային քաղաքականության, դրամի արժևորման և արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ազդեցության՝ տարվա երկրորդ կեսից թուլացման արդյունքում, գնաճը երրորդ եռամսյակի սկզբից աստիճանաբար նվազել է և տարեվերջին կազմել 8.3%: 12-

ամսյա բնականոն գնաճը տարվա ընթացքում ցուցաբերել է նմանատիպ վարքագիծ՝ տարեվերջին կազմելով 9.5%:

Հարկաբյուջետային քաղաքականություն. Տնտեսական աճի սպասվածից բարձր մակարդակի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականությունը 2022 թվականին ընդհանուր առմամբ ուղղված է եղել սահուն կոնսոլիդացիայի շարունակականության ապահովմանը՝ առաջնորդվելով պարտքի կայունության սկզբունքով: Հատկանշական է, որ տնտեսական բարձր աճն անդրադարձել է հարկերի հավաքագրման բարելավման վրա՝ նպաստելով հարկերի՝ նախորդ տարվա համեմատ 21.4 տոկոս բարձր աճի ձևավորմանը, միաժամանակ ապահովելով հարկերի՝ տարվա համար ճշգրտված ծրագրով նախատեսված անվանական մակարդակը: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճին նպաստել են նաև հարկային օրենսդրության փոփոխությունները[3], հարկային վարչարարության որոշակի խստացումը՝ հատկապես ծառայությունների ոլորտում, ինչպես նաև անվանական ՀՆԱ-ի՝ սպասվածից էականորեն բարձր աճը:

Տնտեսական աճի՝ ծրագրվածից բարձր մակարդակի ձևավորման պայմաններում հարկեր/ՀՆԱ-ն պահպանվել է նախորդ տարվա նույն մակարդակում՝ 22.7% և ցածր գտնվել ինչպես 2022 թվականի, այնպես էլ միջնաժամկետ հատվածի համար նպատակադրված թիրախներից: Արդյունքում՝ **եկամուտների ազդակը կանխատեսված զսպողի փոխարեն ունեցել է չեզոք ազդեցություն:**

Այսպիսով, հաշվի առնելով **տնտեսական աճի և պահանջարկի զգալի դրական զարգացումները՝ կարևորվում է բյուջեի վերաբաշխման արդյունավետության տեսանկյունից հարկային քաղաքականության անհրաժեշտ ճշգրտումների իրականացումը:**

2022 թվականի պետական ծախսային քաղաքականության ընթացքը մեծապես ուղղված է եղել տնտեսության ներուժի ավելացման և ընթացիկ տնտեսական իրավիճակի անհրաժեշտությունից բխող գործողությունների իրականացմանը՝ միաժամանակ շարունակելով նաև համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված միջոցառումները[4]: Այսպես, 2022 թվականի

---

[3] Մասնավորապես նշենք՝ մետաղական հանքանյութերի արտահանման տուրքի ներդրումը, որը գործել է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը, մետաղական օգտակար հանածոների համար վճարվող ռոյալթիի համակարգը դարձել է ավելի պրոգրեսիվ, բարձրացվել է նաև 2023 թվականի ռոյալթիի կանխավճարների չափը, բարձրացվել է խաղային ոլորտի (ինտերնետ շահումով խաղերի և տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի) հարկային բեռը, մասնավորապես, ինտերնետ շահումով խաղերի և տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի մասով խաղադրույքներ ընդունելու իրավունք ձեռք բերելու համար սահմանվել են պետական տուրքեր:

[4] 2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերի կազմում կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով հատկացված միջոցների ծավալը կազմել է 16.1 մլրդ դրամ, Արցախյան պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված ծախսերի ծավալը՝ շուրջ 2.0 մլրդ դրամ: Բացի այդ, աճել է ՀՀ պետական բյուջեից Արցախի Հանրապետությանը տրամադրված միջպետական վարկի ծավալը՝ կազմելով 176.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 128.8 մլրդ դրամի համեմատ:

տնտեսական առանձնահատկություններով պայմանավորված, պետական ծախսային քաղաքականությունն ուղեկցվել է դրամի արժևորման և բարձր գնաճային միջավայրի տնտեսական ազդեցությունների մեղմմանն ուղղված հարկաբյուջետային միջոցառումներով: Մասնավորապես, մշակվել և իրականացվել են արտահանելի հատվածի և ՏՏ ոլորտի աջակցության ծրագրեր, իսկ գնաճի ազդեցությունների մեղմման նպատակով որոշակիորեն ավելացվել են սոցիալական ծախսերը[5]: Հատկանշական է, որ սույն միջոցառումների իրականացմանը մեծամասամբ նպաստել է հարկերի հավաքագրման դրական զարգացումների ապահովումը: Արդյունքում, **2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 11.9%-ով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի 4.2% և կապիտալ ծախսերի 78.2% աճերով:** Ընդ որում, ՀՆԱ-ի սպասվածից բարձր աճի պայմաններում պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2021 թվականի նկատմամբ նվազել է 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 26.4%, որի պարագայում բյուջեի ծախսերը համախառն պահանջարկի վրա ունեցել են զսպող ազդեցություն: Հատկանշական է, որ ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 3.7 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերինը՝ աճել 1.4 տոկոսային կետով: Վերջինս զիջել է տարվա համար նախատեսված, ինչպես նաև Կառավարության ծրագրով նպատակադրված թիրախին և կազմել ՀՆԱ-ի 4.5 %-ը: Հարկ է նաև ընդգծել, որ **2022 թվականի ՀՀ պետական բյուջեի ծախսերի կատարողականը, թեև ուղեկցվել է թերի կատարումներով, սակայն, նախորդ տարիների համեմատ էապես բարելավվել է:** Այսպիսով, **չնայած կապիտալ ծախսերի ծրագրերի կառավարման և իրականացման խնդիրները դեռևս շարունակում են մնալ արդիական, սակայն, 2022թ-ին արձանագրվել է կապիտալ ծախսերի բարձր աճ և բարձր կատարողական:**

Հարկ է նշել, որ 2022 թվականին սպասվածից բարձր տնտեսական աճի և հարկային եկամուտների անվանական բարձր աճի ապահովման պայմաններում, վերը նշված՝ բյուջեի ծախսերի կատարումն ուղեկցվել է հարկաբյուջետային կանոնների պահպանմամբ: Դրա մասին է վկայում նաև այն, որ տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի պակասուրդը մշտապես ցածր է եղել կապիտալ ծախսերից:

Պետական բյուջեի եկամուտների՝ ճշտված ծրագրի կատարման և ծախսերի՝ ծրագրվածի համեմատ ցածր կատարողականի արդյունքում պետական բյուջեի պակասուրդը զիջել է ծրագրված մակարդակին: Այսպես, 2022 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 44.0%-ով և կազմել 179.5 մլրդ դրամ՝ 21.9 տոկոսով զիջելով ծրագրով նախատեսված

[5] Կառավարությունը սեպտեմբերի 1-ից բարձրացրել է կենսաթոշակներն ու նպաստները, որոնք նախատեսվել էր բարձրացնել 2023 թվականի հունվարի 1-ից: 2022 թվականին կենսաթոշակները նախորդ տարվա նկատմամբ աճել են 9.2%-ով:

ցուցանիշին: 2.5 տոկոսային կետով նվազել է նաև ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ՀՆԱ-ում և կազմել 2.1%: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը հիմնականում կրել է հակացիկլիկ բնույթ և տարվա համար նախանշված չեզոքի համեմատ ունեցել է զսպող դիրք: Այնունամենայնիվ, **աննախադեպ բարձր արտաքին պահանջարկի կարգավորման տեսանկյունից, կարևորվում է առավել զսպող հարկաբյուջետային քաղաքականության, ինչպես նաև դրանից բխող՝ տնտեսության ոլորտային անհրաժեշտ վերաբաշխումների արդյունավետ իրականացումը:**

Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի պակասուրդը զգալիորեն ֆինանսավորվել էր արտաքին աղբյուրների հաշվին, ապա 2022 թվականին այն զգալի չափով ֆինանսավորվել է ներքին աղբյուրներից: Ընդ որում, արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում տարվա ընթացքում ստացվել է նախատեսված վարկային միջոցների 83%-ը:

2022 թվականին, սպասվածից բարձր տնտեսական ակտիվության, հարկաբյուջետային զսպող քաղաքականության իրականացման, ինչպես նաև դրամի արժևորման արդյունքում արձանագրվել է պետական պարտքի էական կրճատում, ինչը զգալի գերազանցել է հարկաբյուջետային կանոններով նախանշված ուղեգիծը: Այսպես, 2022 թվականին բարձր անվանական ՀՆԱ-ի և դրամի արժևորման պայմաններում ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 14.2 տոկոսային կետով և ձևավորվել ՀՀ կառավարության պարտքի բեռի նվազեցման 2022-2026թթ. ծրագրով նախատեսված ցուցանիշից զգալի ցածր՝ ՀՆԱ-ի 49.3%[6]**:** Ընդ որում, ՀՆԱ-ում պետական պարտքի նվազման մեծ մասը բաժին է ընկել արտաքին պարտքին, որին էականորեն նպաստել է դրամի արժևորումը: Հարկ է նշել, որ 2022 թվականին զգալի նվազել է պարտքի ժամկետայնությունը: Այսպես, տարվա ընթացքում տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1762 օր՝ 2021 թվականի նույն ժամանակահատվածի 3207 օր ցուցանիշի համեմատ: Պարտքի ժամկետայնության նվազմանը զուգահեռ, որոշակի աճել է պարտքի անվանական տոկոսադրույքը՝ ռիսկեր առաջացնելով պարտքի սպասարկման ծախսերի աճի ուղղությամբ:

Այսպիսով, պետական պարտքի նվազման և տնտեսության միջնաժամկետ աճին ուղղված ծրագրերի իրականացմանը զուգահեռ, անհրաժեշտ է **կարևորել հարկաբյուջետային գործող կանոնների շրջանակներում կայունությանն ուղղված**

---

[6] Կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 46.7%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 13.6 տոկոսային կետով:

միջոցառումների հետևողականության ապահովումը, ինչպես նաև պարտքի սպասարկման հեռանկարների բարելավումը:

Ամփոփում. Ամփոփելով նշենք, որ շարունակվող մարտահրավերների և անորոշությունների, ինչպես նաև ՀՀ տնտեսությունում սպասվածից ավելի դրական զարգացումների պայմաններում, 2022 թվականի հարկաբյուջետային քաղաքականության սահուն կոնսոլիդացիայի և դրամավարկային քաղաքականության արդյունավետ համադրման շնորհիվ **հնարավոր է եղել ապահովել մակրոտնտեսական կայունությունը ՀՀ-ում:** Այդուհանդերձ, ստեղծված տնտեսական բարենպաստ իրավիճակում, 2022 թվականին իրականացրած հարկաբյուջետային քաղաքականության արդյունքները որոշ չափով շեղվել են միջնաժամկետ և երկարաժամկետ նախանշված թիրախներից: Այս համատեքստում, **ԿԲ-ը կարևորում է տարվա ընթացքում հարկաբյուջետային հակացիկլիկ քաղաքականության իրականացումը, սակայն շեշտադրում է տնտեսության երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից ներկայումս համարժեք զսպող, ոլորտային վերաբաշխմանն ուղղված միջոցառումների և պետական կապիտալ ծախսերի նախատեսված ծավալների ապահովման անհրաժեշտությունը:** Միևնույն ժամանակ, **հարկաբյուջետային միջնաժամկետ կայունության և տնտեսական խթանների արդյունավետ համադրման շրջանակներում ԿԲ-ը ընդգծում է Կառավարության նպատակադրած թիրախներն ապահովող արդյունավետ միջոցառումների հետևողական իրականացումը:**